

## 89 ՆԱՀԱՏԱԿ ԵՒ ԱԷԼԻ ՔԱՆ 277 ՎԻՐԱԿՈՐ՝ ՀՈՄՄԻ ՄՊԱՅԻՑ ՀԱՄԱՆԱՐԱՆԻ ԹԻՐԱՆՍԿՐԻՄԱՆ ՇԵՏԻՆՆԵՐՈՎ

Սուրիական բանակի հրամանատարությունը հաղորդագրությամբ յայտարարեց, որ Յիկազաբթի, 5 հոկտեմբեր 2023-ի յետմիջօրեին, հիմա ռազ-



մական համալսարանի սպաներու և արտական հանդիսության ընթացքին, զինեալ խմբաւորումներու կողմէ անօդաչու թռչող սարքերով (այսուհետեւ՝ ԱԹՍ) անհրաժեշտ յարձակում մը տեղի ունեցաւ, որուն հետեւանքով 89 նահատակներ եւ 277 վիրաւորներ արձանագրուեցան:

Շար.՝ էջ 2 >

## ՊԱՂԵՍԻՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՍԱՆՉԱՉԵՐԾԵՅ՝ «ԱՔՍԱՅԻ ՇԵՂԵՂ» ՅԱՆՊՈՒՎՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ

Ի պատասխան Իսրայէլի «Աքսա» Մզ կիթ խուժելուն եւ պաղեստինցիներու վրայ յարձակումին, պաղեստինեան ազգային դիմադրութիւնը սանձազերծեց «Աքսայի Շեղեղ» կոչուած ռազմական յանդուգն գործողութիւն մը, թիրախ դարձնելով

Կազգայի շրջակայքը եւ 1948-ին բռնագրաւուած հողատարածքներուն մէջ գըտնուող իսրայէլեան բնակեցման վայրերը: Դիմադրութիւնը բաց պատերազմ յայտարարեց նաեւ արեւմտեան ափի բոլոր շրջաններու իսրայէլեան ուժերուն դէմ: Դիմադրութեան մարտիկները Շաբաթ առաւօտեան շուրջ ժամը 6:30-ին դուրս եկան Կազգայն եւ ներխուժեցին իսրայէլեան բազմաթիւ բնակեցման վայրեր՝ գրաւելով իսրայէլեան բանակի բազմաթիւ դիրքեր եւ կեդրոններ, ինչպէս նաեւ սպանելով անելի քան 700 իսրայէլացիներ եւ վիրաւորելով շուրջ 2156 ուրիշներ, որոնցմէ 350-ին ստացած վէրքերը վտանգաւոր են:



Շար.՝ էջ 2 >

## ԱՐԿԱՏԻ ՂՈՒԿԱՏԵԱՆԻՆ, ԲՍԿՈ ՍԱՀԿԵԱՆԻՆ ԵՒ ՂԱԻԹ ԻՇԽԱՆԵԱՆԻՆ ԱՀԱԲԵԿՈՒԹԵԱՆ ՄԵՂՏՊՐԱՆՔ ԱՌՁՅՈՒՊՈՒԵՃԱՐ



Արցախի Հանրապետութեան նախկին նախագահներ Արկատի Ղուկասեանին եւ Բակո Սահակեանին, ինչպէս նաեւ Ազգային ժողովի նախկին նախագահ Դաւիթ Իշխանեանին պաշտօնական Պաքուն անհրաժեշտութեան մեղադրանք առաջադրած է:

Այս մասին կը հաղորդէ Ատրոպայեճանի Պետական անվտանգութեան ծառայութիւնը:

Շար.՝ էջ 4 >

## ՀՈԳԵՀԱՆՊԱՏԵԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ ԸՈՒՇԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ԵՒ ՍՈՒՐԻՈՅ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՀՈԳԻՆԵՐՈՒՆ

Կիրակի, 8 հոկտեմբեր 2023-ին, տնօրինութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Բարեգան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեանին, Թեմի եկեղեցիներուն մէջ Հոգեհանգստեան արարողութիւն կատարուեցաւ՝ Շուշիի պաշտպանութեան եւ Սուրիոյ պատերազմի նահատակներու հոգիներուն խաղաղութեան համար:



Հալէպի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ Սուրբ եւ Ամահ Պատարագին նախագահեց, իր հայրական պատգամը ժողովուրդին ուղղեց եւ Հոգեհանգստեան պաշտօն կատարեց Առաջնորդ Սրբազան Հայրը:

Շար.՝ էջ 12 >



## ՀԱՂՈՂԱԳՐՈՒԹԻՒՆ ՀՄԸՄ-Ի ՊԱՏՊԱՏԱԿՈՐԱԿԱՆ 13-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

ՀՄԸՄ-ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ 2-7 հոկտեմբեր 2023-ին, Հայաստան: Ժողովին մասնակցեցան միութեան Շրջանային եւ Մեկուսի 30 շրջաններէ 75 իրաւասու ձայնով պատգամաւորներ, ՀՀԴ Բիւրոյի անդամ Մկրտիչ Մկրտիչեան, Թեհրանի ՀՄԸՄ-ի ներկայացուցիչ Սոֆի Ջաղարբէկեան, Համագայի կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ Արտաշէս Շահպազեան եւ խորհրդակցական ձայնով 28 իրաւիրեալներ, ընդամենը՝ 103 մասնակիցներ: Ժողովին բացման ներկայ գտնուեցաւ ՀՀԴ Բիւրոյի ներկայացուցիչ Յակոբ Տէր Խաչատուրեան:

Ժողովը իր տեսակին մէջ իւրայատուկ էր, որովհետեւ կը գումարուէր ներագային ծանր պայմաններու մէջ:

Պատգամաւորական Ընդհանուր ժողովը մանրամասն քննութեան ենթարկեց 2019-2023 քառամեակի ՀՄԸՄ-ի կեդրոնական Վարչութեան

7 հոկտեմբեր, 2023

ԴԻՄՆ

ՀՄԸՄ-Ի ՊԱՏՊԱՏԱԿՈՐԱԿԱՆ

13-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

Շար.՝ էջ 9 >



021 2110 958



www.kantsasar.com



kantsasarweekly@hotmail.com



www.facebook.com/kantsasar

### Խմբագրական

## «ԱՔՍԱՅԻ ՀԵՂԵՂ»-ՈՎ ՄԿՍԱԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԱԾ-ՔԸ Կ'ԸՆԴԻԱՅՆԻ՛

Պաղեստինեան դիմադրութեան սանձազերծած «Աքսայի Հեղեղ» զինուորական գործողութիւնը ծրագրուած ու կազմակերպուած ըլլալուն կողքին, ունէր անակնկալի գործօնը ե՛լ ժամկետի ե՛լ օգտագործուած զէնքերու առումով:

Դիմադրութեան այս գործողութիւնը ձեւով մը շրջեց հակառակորդի անխոցելիութեան քարոզչութիւնը, իսկ պաղեստինցիներուն քարոզչական նպատակաւորուած աշխատանքը ցոյց տուաւ, որ գործողութիւնը ոչ թէ կիներ ու երեխաներ սպանել, այլ զուտ զինուորական թիրախներ հարուածել ու գերիներ վերցնել էր՝ ստիպելու հակառակորդը բանակցութեան նստելու պաղեստինցիներուն հետ:

Գործողութեան յառաջիկայ օրերուն սկսաւ երեւելի դառնալ պատերազմի տարածքին ընդլայնման հաւանականութիւնը:

Պաղեստինեան դիմադրութեան կողմէ Իսրայելի դէմ յայտարարուած «Աքսայի Հեղեղ» գործողութեան զուգահեռ, 8 Հոկտեմբերի առաւօտեան հարաւային Լիբանանէն Իսրայել հրթիռակոծում արձանագրուեցաւ:

Առաւօտեան կանուխ ժամերուն Արքուպի եւ Հասայայի շրջակայքէն տեղի ունեցաւ հրթիռակոծում, որ թիրախ դարձուց Ռուէյսաթ Ալամի մէջ գտնուող իսրայելեան զօրանոցներ, ինչպէս նաեւ ռատարի կեդրոնը, որ ռազմավարական կարեւոր թիրախ մը կը նկատուի:

Մագարեհ Շեպայի մէջ եւ Շէյխ լեռան վրայ գտնուող իսրայելեան զինուորական կեդրոններ խոյսալէ ռմբակոծուեցան:

Աւելի ուշ Հրզպալլա ստանձնեց իսրայելեան ռազմավարական դիրքեր ռմբակոծելու պատասխանատուութիւնը:

*«Այս յարձակումները գործուած են լիբանանեան բռնագրաւուած մնացեալ հողերը ազատագրելու ճամբուն վրայ եւ պաղեստինեան դիմադրութեան ու համբերատար պաղեստինցիներուն զօրակցութեան նպատակով»*, կ'ըսուէր Հրզպալլայի հաղորդագրութեան մէջ:

Իսրայելեան ուժեր արձակեցին հրթիռներ, որոնց նպատակն էր Դիմադրութեան մարտիկները հեռացնել Մագարեհ Շեպայէն:

Յիշենք, որ Իսրայել բազմիցս հրթիռակոծած էր նաեւ Սուրիոյ օդակայանները, իսկ սուրիական կողմէն յստակօրէն ըսուած էր, որ կը պահպանենք պատասխան հարուածի իրաւունքը՝ յարմար ժամանակին:

Միւս կողմէ Իրան կը զգուշացնէր Իսրայելը, որ պաղեստինցիներու հետ իր բախումներուն վերջ դնելու չանցնի կարմիր գիծը: Այստեղ տեղին է յիշել Ատրպէյճան-Իսրայել մերձեցումը, որ արցախեան պատերազմին ճամբով Իրանի սահմանին հասնելու կամ Իրանը շրջափակելու երանգներ կը պարունակէր իր մէջ: Ի գուր չէր, որ Իսրայել կը զինէր Ատրպէյճանը Արցախի վերջին պատերազմին ու կը դիւրացնէր Ատրպէյճանի բռնագրաւումը Արցախին:

Այս բոլորը կը յուշեն, որ եթէ Իսրայել շարունակէ սպառնալ պաղեստինցիներուն, շարունակէ հրթիռակոծել Կազզան ու գերիներու փոխանակման համար չբանակցի, պատերազմի տարածքի ընդլայնման հաւանականութիւնը մեծ կրնայ ըլլալ:

Պաղեստինեան դիմադրութիւնը այս գործողութեամբ քայլեր կը պարտադրէ հակառակորդին:

«Գ.»

### 89 ՆԱՀԱՏԱԿ ԵՒ ԱԿԵԼԻ...

#### ՎՍԿԻՊՐ՝ Էջ 1

Հրամանատարութիւնը յայտնեց. «Շարունակելով իրենց ոճիրները եւ սպառնալով Սուրիոյ ժողովուրդին, միջազգային ծանօթ կողմերէ հովանաւորուած զինեալ ահաբեկչական խմբաւորումներ ԱԹՍ-ներով թիրախ դարձուցին շրջանաւարտ սպայից կազմը, որուն հետեւանքով նահատակներ եւ գոհեր արձանագրուեցան: Սուրիական բանակի հրամանատարութիւնը ահաբեկչական այս արարքը ոճիր կը համարէ եւ կը հաստատէ, որ իր կարելիութիւններու լարումով հակահարուածներ պիտի հասցնէ ահաբեկիչներուն, ուր ալ գտնուին անոնք»:

Սուրիա խստիւ դատապարտեց յարձակումը եւ կոչ ուղղեց ՄԱԿ-ին եւ Ապահովութեան Խորհուրդին պատասխանատուութեան ենթարկելու ահաբեկչութիւնը հովանաւորող երկիրները:

Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, ուր շեշտեց. «Այս ոճիրը շարունակութիւնն է ԱՄՆ-ի եւ այլ երկիրներու կողմէ զօրակցութիւն ստացող ահաբեկչական խմբաւորումներու բռնարարքներուն՝ Սուրիոյ ժողովուրդին արիւնը հեղելու եւ Սուրիան սպախայունացնելու համար: Հինգշաբթի, 5 Հոկտեմբեր 2023-ի յետմիջօրէին, ահաբեկչական խմբաւորումներ ԱԹՍ-ներով թիրախ դարձուցին Սուրիոյ Հոմս քաղաքի սպայից համալսարանի ակադեմիական հանդէսը, որուն հետեւանքով շարք մը զինուորներ, քաղաքացիներ նահատակուեցան, ինչպէս նաեւ ծնողներ, մանուկներ եւ կիներ ծանրօրէն վիրաւորուեցան»:

Այս առիթով, Սուրիոյ կառավարութիւնը երկրէն ներս ետօրեայ սուգ յայտարարեց:

Կառավարութիւնը հաղորդագրութեամբ յայտնեց. «Սուրիոյ Հանրապետութեան դրօշը կիսով չափ կ'իջնէ Սուրիոյ Հանրապետութեան բոլոր շրջաններուն եւ արտերկրի սուրիական բոլոր դեսպանատուներուն եւ դիւանագիտական հաստատութիւններուն մէջ»: Սուրիոյ Չքօսաշրջութեան Նախարարութիւնը թելադրեց ետօրեայ սուգի ընթացքին հանրային հանդիսութիւնները, խնձոյքները եւ գեղարուեստական ծրագիրները չեղեալ համարել:

Պաշտօնական եւ ժողովրդական ներկայութեամբ, Ուրբաթ, 6 Հոկտեմբեր 2023-ի տեղի ունեցաւ նահատակներու յուղարկաւորութիւնը:

Երկուշաբթի, 9 Հոկտեմբեր 2023-ին, սուրիական դրօշը վերստին բարձրացաւ Սուրիոյ Հանրապետութեան բոլոր շրջաններուն եւ արտերկրի սուրիական բոլոր դեսպանատուներուն եւ դիւանագիտական հաստատութիւններուն վրայ:

Այս առիթով Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ ցաւակցագիտելով ստացաւ Հայաստանի, արաբական եւ եւրոպական երկիրներու Նախագահներէն:

### ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ...

#### ՎՍԿԻՊՐ՝ Էջ 1

Դիմադրութիւնը վնասագերծեց իսրայելեան հրասայլեր եւ գրաւեց իսրայելեան բանակին պատկանող մեքենաներ: Լրատումիչոցներ հաղորդեցին, որ պաղեստինցի մարտիկները բուն ռմբակոծման տակ ներթափանցած են «20 բնակեցման վայր եւ իսրայելեան բանակի 11 ճամբար ու ռազմակայան»: 800-էն 1000 զինեալներ Կազզայի շուրջ կառուցուած ցակապատէ 80 կէտերէ անցնելով ներթափանցած են իսրայելեան կողմ:

Յաջորդ օրը, իսրայելեան օդուժը որպէս պատասխան բուն կերպով հրթիռակոծեց Կազզան:

Վերջին տուեալներուն համաձայն, Կազզայի վրայ իսրայելեան գրոհին հետեւանքով նահատակներուն թիւը հասաւ 1055-ի, իսկ վիրաւորներունը՝ 5184-ի:

Պաղեստինեան լրատումիչոցներ հաղորդեցին, որ իսրայելեան օդանաւերը միջազգայնօրէն արգիլուած ֆոսֆորով թիրախ դարձուցած են Կազզայի նաւահանգիստը եւ Կազզայի արեւմտեան շրջանը:

Իսրայել Կազզայի շրջակայքը զինուորական փակ գօտի յայտարարեց, ուր արգիլուեցաւ իսրայելացի բնակողներուն մուտքը, վտանգաւոր ըլլալուն պատճառով:

Դիմադրութիւնը յայտարարեց, որ «Աքսայի Հեղեղ» գործողութեան ընթացքին, Դիմադրութիւնը կը խուսափի քաղաքայիններուն վնաս հասցնելէ եւ թիրախ կը դարձնէ միայն իսրայելեան ռազմական համակարգը:

ՄԱԿ յայտարարեց, որ Կազզայի դէմ իսրայելեան գրոհին հետեւանքով աւելի քան 260.000 պաղեստինցի տեղահանուած է:

Իսրայելեան լրատումիչոցներ յայտարարեցին, որ «Աքսայի Հեղեղ» գործողութեան սկիզբէն մինչեւ այսօր իսրայելեան կողմէն 1200 անձ սպանուած է, 20 բնակեցման վայր՝ քանդուած, ինչպէս նաեւ բազմաթիւ գիւղատընտեսական հողատարածքներ վնասուած են:

Սուրիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը հաղորդագրութեամբ շեշտեց, որ Իսրայելի դէմ պաղեստինեան ազգային դիմադրութեան իրականացուցած պատուաբեր ձեռքբերումը փաստեց, որ դիմադրութիւնը փակ ճամբան է Պաղեստինի ժողովուրդին օրինական իրաւունքները վերականգնելու, հաստատելով Սուրիոյ զօրակցութիւնը պաղեստինեան ազգային դիմադրութեան:

Նախարարութիւնը եզրափակելով հաստատեց, որ Պաղեստինի ազգային դիմադրութեան հերոսները արժանի են արաբական երկիրներու աջակցութեան:

Լուրեր Հայաշխարհին

ՀՅԴ ԲԻՐՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀՅԴ Բիւրօն խնդրում է Ատրպեյճանի կողմէ Արցախի նախկին և ներկայ պետական այրերի ձեռքարկությունը...



խարհի ազդեցիկ հայկական շրջանակները պետք է գործադրեն քաղաքական և դիվանագիտական բոլոր հնարավորությունները...

Ալիեւեան վարչակարգի յանցանոր գործունեությունը, ուժի եւ ուժի կիրառման սպառնալիքով...

ՀՅԴ ԲԻՐՈ 4 հոկտեմբեր 2023

21-րդ դարուն ամբողջ մարդկության, մեծապետական երկիրներում և միջազգային այսպես կոչված մարդու իրաւունքներու պաշտպան կազմակերպություններում...

Դաւադիր պայմանաւորուածութիւններու եւ լուռ համաձայնութիւններու պայմաններուն մէջ Ատրպեյճանի յանցանոր վարչախումբը կը փորձէ Արցախի Հանրապետութեան կազմալուծման եւ արցախահայութեան հայրենազրկման գործընթացը անշրջելի դարձնել:

Այս հարցը ոչ միայն քաղաքական, այլեւ ազգային նշանակութիւն ունեցող, արժանապատուութեան հարց է:

Առաջին հերթին Հայաստանի Հանրապետութեան պատկան մարմինները, բայց նաեւ ամբողջ աշխարհը...

ՀՀ ԿԸ ՃԱԿԱԿՅԻ ՍՈՒԻՈՅ ԺՈՂՎՈՐԴԻՆ ԵՒ ՀՈՄՍԻ ՌԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱՍԱՐԱՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՆ



Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործոց Նախարարութիւնը հաղորդագրութեամբ ցուակցութիւն յայտնեց Սուրիոյ ժողովուրդին եւ Հոմսի ռազմական համալսարանի նահատակներու ընտանիքներուն ու վիրաւորներուն շուտափոյթ ապաքինում մարդեց:

ՉԱԽԱՐՈՎԱ. «ՂԱՐԱԲԱԴԻ ՄԵՋ ՌՈՒՍԻՈՅ ԽՆՂԱՂԱՊԱՆՆԵՐՈՒՆ ԳՈՐԾՈՒՆԵՒՈՒԹԻՒՆ ԿԸ ՅԱՐՄԱՐՅՈՒԻ ՆՈՐ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՆ»

Վերջին մէկ տարուան ընթացքին Լեռնային Ղարաբաղի իրավիճակը արմատապէս փոխուած է, հետեւաբար, Ռուսիոյ խաղաղապահներու գործունեութիւնը կը յարմարցուի նոր պայմաններուն:



Սեպտեմբերի զինուորական բախումներէն ետք բնակչութեան զանգուածային ելքի լոյսին տակ մեր խաղաղապահներուն գործունեութիւնը կը փոխուի, ըսած է պաշտօնէսէն աւելցնելով, որ այդ պայմաններու փոփոխութեան պատճառ դարձած է Հայաստանի կողմէ Լեռնային Ղարաբաղը Ատրպեյճանի տարածք ճանաչումը:

Չախարովա յայտնած է, որ վերջերս փակուած են Ռուսիոյ խաղաղապահներու մշտական եւ ժամանակաւոր շարք մը դիտակետեր:

Չախարովա աւելցնելով ըսած է, որ Հայաստանի, Ռուսիոյ եւ Ատրպեյճանի ղեկավարներուն միջեւ Նախատեսուող նոր եռակողմ հանդիպման ժամկետներուն եւ ձեւաչափին մասին հետագային կը տեղեկացուի:

ՀՀ ԱԳ ՓՈՒՆԱՄՍԱՐԱՐԸ ԱՄՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՏՈՒՂԱՐԻ ՏԵՂԱԿԱՆԻ ՀԵՏ ԲԵՆԱՐԿԵԼ ԵՒ ԼՂ-ԻՅ ՓԱԽՍԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԱՉՈՒՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԵՐ

Ժընեւի մէջ 9 հոկտեմբերին Հայաստանի արտաքին գործոց նախարարի տեղակալ Վահէ Գեորգեան հանդիպում ունեցած է ԱՄՆ բնակչութեան, փախստականներու եւ տեղահանուածներու հարցերով պետական քարտուղարի տեղակալ Ժուլիէթա Վալս Նոյեսի հետ:



«Արմէնփրէս»-ի տուեալներով, Վահէ Գեորգեան պետական քարտուղարի տեղակալին ներկայացուցած է Ատրպեյճանի կողմէ Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին դէմ իրականացուած ցեղային զտման քաղաքականութիւնը եւ մարդու իրաւունքներու զանգուածային խախտումներն ու ռճրագործութիւնները:

Ըստ աղբիւրին՝ քննարկուած է Լեռնային Ղարաբաղէն փախստականներու միջազգային պաշտպանութեան եւ աջակցութեան հարցեր:

ԿՐԱՆՏԱՅԻ ՄԵՋ ԲԱՌԱԿՈՂՍ ՀԱՆԳԻՊՈՒՄԻՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԱՐՅԱԽԻ ՄԵՋ ՏԵՂԻ ՌԻՆԵՅԱԾԸ «ՉԱՆԳՈՒՍԱՅԻՆ ՏԵՂԱՓՈՒՆՈՒԹԻՒՆ» ԿՈՐԱԿԵ

Հայաստանի Հանրապետութեան վարչապետ Նիկոլ Փաշինեան, Եւրոպական Խորհուրդի նախագահ Շարլ Միշել, Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն եւ Գերմանիոյ վարչապետ Օլաֆ Շոլց 5 հոկտեմբերին Կրանտայի մէջ տեղի ունեցած հանդիպումին որդեգրած են յայտարարութիւն մը, որուն մէջ Լեռնային Ղարաբաղի մէջ տեղի ունեցածը կը բնորոշուի իբրեւ զանգուածային տեղափոխութիւն:



Հայաստանի (29 հազար 800 քառ.քմ) եւ Ատրպեյճանի (86 հազար 600 քառ.քմ) գերիշխանութեան, սահմաններու անձեռնմխելիութեան եւ տարածքային ամբողջականութեան փոխադարձ ճանաչման վրայ, ինչպէս նշուած է նախագահ Միշելի 14 Մայիս 2023-ի եւ 15 Յունիսի յայտարարութիւններուն մէջ: Անոնք կոչ ուղղած են խստօրէն պահպանելու ուժի եւ ուժի սպառնալիքի կիրարկման սկզբունքը: Անոնք ընդգծած են սահմանազան ուղղութեամբ աշխատելու հրատապ անհրաժեշտութիւնը՝ հիմնուելով Խորհրդային Միութեան սպայակոյտի ամենէն վերջին քարտեզներու վրայ, որոնք տրամադրուած են կողմերուն եւ պետք է հիմք հանդիսանան նաեւ ուժերու միջեւ հեռաւորութիւն պահպանելու, խաղաղութեան պայմանագիր վերջնական տեսքի բերելու եւ մարդասիրական բոլոր խնդիրներու լուծման համար»:

Ժողովին մասնակիցները յայտարարութեան մէջ կ'ընդգծեն «իրենց անսասան աջակցութիւնը Հայաստանի անկախութեան, գերիշխանութեան, տարածքային ամբողջականութեան եւ սահմաններու անձեռնմխելիութեան»:

«Անոնք նաեւ իրենց աջակցութիւնը յայտնեցին Եւրոպական Միութիւն-Հայաստան յարաբերութիւններու ամրապնդման՝ իր բոլոր չափումներով, հիմնուած Հայաստանի Հանրապետութեան կարիքներուն վրայ:

«Անոնք համաձայնեցան Հայաստանին յաւելնել մարդասիրական օգնութիւն տրամադրելու անհրաժեշտութեան շուրջ, որովհետեւ անիկ կը բխի Ղարաբաղի հայերու վերջին զանգուածային տեղահանութեան հետեւանքներուն: Անոնք ընդգծեցին, որ այդ գաղթականները պետք է ազատօրէն օգտուին իրենց տուններ եւ իրենց բնակութեան վայրեր վերադառնալու իրաւունքէն՝ առանց որեւէ պայմաններու, միջազգային հսկողութեան տակ եւ յարգելով իրենց պատմութիւնը, մշակոյթը եւ մարդու իրաւունքները:

«Անոնք հաւատարիմ կը մնան Հայաստանի եւ Ատրպեյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման ուղղուած բոլոր ջանքերուն՝ հիմնուած

նուելով Խորհրդային Միութեան սպայակոյտի ամենէն վերջին քարտեզներու վրայ, որոնք տրամադրուած են կողմերուն եւ պետք է հիմք հանդիսանան նաեւ ուժերու միջեւ հեռաւորութիւն պահպանելու, խաղաղութեան պայմանագիր վերջնական տեսքի բերելու եւ մարդասիրական բոլոր խնդիրներու լուծման համար»:

«Անոնք կոչ ուղղեցին՝ աւելի մեծ շրջանային համագործակցութեան եւ բոլոր սահմաններու, ներառեալ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմաններու բացման, ինչպէս նաեւ՝ շրջանային կապերու բացման, երկիրներու գերիշխանութեան եւ իրաւաստութեան լիակատար յարգման, ինչպէս նաեւ հաւասարութեան եւ փոխադարձութեան սկզբունքներու հիման վրայ:

«Եւրոպացի ղեկավարները Հայաստանին եւ Ատրպեյճանին կոչ ուղղեցին ազատ արձակելու բոլոր ձերբակալուածները եւ համագործակցելու անհետ կորածներու ճակատագիրին լուծում տալու եւ ականազործման աշխատանքները դիրացնելու համար», ըսուած է քառակողմ փաստաթուղթին մէջ:

## ԱՐՅԱՆԻ ԿՈՐՈՒՍԵՆ ԵՏՔ ՓԱՇԻՆԵԱՆ ՊԵՏՔ Է ՉԵՂԵԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԷ 2020-Ի ՀԱՄԱՉԱՅՆԱԳԻՐԸ



Յարութ Սասունեան

10 Նոյեմբեր 2020-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինեան, Ատրպեյճանի նախագահ Իլհամ Ալիև և Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին համաձայնագիր ստորագրեցին արցախեան պատերազմի զինադադարի վերաբերեալ:

Չինադադարը սովորաբար կը նշանակէ, որ պատերազմող կողմերը կը դադարեցնեն մարտերը՝ կանգ առնելով իրենց զբաղեցուցած դիրքերու վրայ: Տարօրինակ է, բայց 2020-ի զինադադարի համաձայնագրի պարագային, Հայաստան Ատրպեյճանի յանձնեց մեծ հողատարածքներ, ուր ոչ մէկ ատրպեյճանցի զինուոր ոտք դրած էր, օրինակ՝ Աղտամի, Քարվաճառի եւ Լաչինի շրջանները, բայց ո՛չ Միջանցքը:

Ուստի, 2020-ի համաձայնագիրը անելի շատ յանձնատուութիւն էր Հայաստանի համար, քան՝ զինադադար: Ահա՛ ատոր հետեւանքով յառաջացած հարցերը.



PRESS OFFICE OF THE GOVERNMENT OF ARMENIA

1. Փաշինեան Ատրպեյճանի հետ զինադադարի համաձայնագիրը կընքելու պատճառ չունէր, քանի որ պատերազմը ոչ թէ Հայաստանի, այլ Ատրպեյճանի եւ Արցախի միջեւ էր: Ո՛չ Հայաստան, ո՛չ ալ Ատրպեյճան պատերազմ յայտարարած էին միմեանց դէմ:

2. Փաշինեան լիազօրութիւն չունէր Ատրպեյճանին յանձնելու այն տարածքները, որոնք կը պատկանէին ոչ թէ Հայաստանի, այլ՝ Արցախի:

3. 2020-ի համաձայնագիրով ժամկետներ սահմանուած էին Հայաստանի, բայց ոչ Ատրպեյճանի համար՝ իրականացնելու տարբեր պարտաւորութիւններ, օրինակ՝ տարածքներու տարհանում եւ ռազմագերիներու փոխանակում: Հայաստանի կառավարութիւնը անխոհեմաբար անմիջապէս յանձնեց բոլոր ատրպեյճանցի գերիները, մինչդէռ Ատրպեյճան ազատ արձակեց միայն փոքրաթիւ հայ գերիներ: Երբեք տարի անց, տասնեակ հայ բանտարկեալներ կը շարունակեն տանջուիլ Պաքուի բանտերուն մէջ: Փաշինեան ոչ միայն ջանք չի գործադրեր այդ բանտարկեալները վերադարձնելու համար, այլեւ Նոյնիսկ չի խօսիր անոնց մասին:

4. 2020-ի համաձայնագիրով Լաչինի միջանցքը՝ Արցախը Հայաստանին կապող միակ ճամբան, 12 Դեկտեմբեր 2022-ին բռնի ուժով եւ անօրինական կերպով գրաւուեցաւ Ատրպեյճանի կողմէ, թէեւ զայն պէտք է վերահսկէին ռուս խաղաղապահները:

5. 2020-ի համաձայնագիրը պարտաւորեցուցած է, որ «պէտք է ապաշրջըջափակուին տարածաշրջանի բոլոր տնտեսական եւ երթուղային կապերը»: Ասկա կը նշանակէ, որ ե՛ւ Հայաստան, ե՛ւ Ատրպեյճան պիտի կարենան անցնիլ միմեանց տարածքներով: Փաշինեան պատրաստակամութիւն յայտնեց թոյլ տալ ատրպեյճանցիներուն, որ Հայաստանի տարածքով Ատրպեյճանի արեւելեան հատուածէն անցնին դէպի Նախիջեան, բայց երբեք չնշեց, որ նման մօտեցում մը պիտի ըլլայ փոխադարձ: Հակառակ 2020-ի համաձայնագրին՝ Ատրպեյճան կը պահանջէր ոչ թէ պարզապէս անցում, այլ «միջանցք», ինչ որ կը նշանակէ, որ Հայաստանով անցնող ճամբան պիտի պատկանի Ատրպեյճանի: Ալիւ ոչ մէկ անգամ նշեց, որ ինքնիր հերթին թոյլ կու տայ հայերուն՝ հատել Ատրպեյճանի սահմանը: Իրավիճակը անելի սրելով՝ Թուրքիա կեղծօրէն կը պահանջէ, որ Հայաստան ընդունի «Չանգեզուրի միջանցքը»՝ նախքան որ համաձայնի բանալ Հայաստանի եւ Թուրքիոյ միջեւ սահմանը:

6. Փաշինեան բազմիցս խօսած է Ատրպեյճանի հետ խաղաղութեան պայմանագիր կնքելու իր ծրագրի մասին: Նման խաղաղութեան պայմանագիր կնքելու կարիք չկայ, քանի որ Հայաստան չէր պատերազմէր Ատրպեյճանի դէմ: Խաղաղութեան պայմանագիրներ կը կնքուին պատերազմող կողմերու միջեւ: Ատրպեյճան կը պատերազմէր ոչ թէ Հայաստանի, այլ Արցախի դէմ:

7. Հակառակ 2020-ի համաձայնագրին, որով ռուս խաղաղապահները

Արցախի մէջ պիտի մնային մինչեւ 2025, Ատրպեյճան խախտեց այդ դրոյթը՝ անցեալ ամիս Ներխուժելով եւ բռնագրաւելով Արցախի մնացած մասը՝ անոր 120 հազար բնակիչներուն ստիպելով փախչիլ Հայաստան:

8. 2023 Սեպտեմբերին, Ատրպեյճանի կողմէ Արցախի բռնագրաւումը անիմաստ կը դարձնէ ռուս խաղաղապահներու դերակատարութիւնը, ինչ որ կը նշանակէ, որ ռուս զինուորները պէտք է լքեն այն, որ այժմ ատրպեյճանական տարածք կը համարուի:

9. Թէեւ կան հիմնաւոր պատճառներ՝ մեղադրելու Ռուսիան արցախահայութեան պաշտպանութեան հարցով իր անգործութեան համար, Նոյն-քան հիմնաւոր պատճառ կայ՝ մեղադրելու Փաշինեանը անոր համար, որ ան Արցախը ճանչցած է իբրեւ Ատրպեյճանի մաս: Հասկնալի է, որ հակառակ Հայաստանի հետ Ռուսիոյ դաշինքին, հաշուի առնելով անոր մասնակցութիւնը ռազմական պատերազմին, նախագահ Փութին որոշած է, որ Թուրքիա (ՆԱԹՕ-ի միակ անդամը, որ պատժամիջոցներ չէ կիրարկած Ռուսիոյ դէմ) եւ անոր կրտսեր եղբայր Ատրպեյճանը շատ անելի կարելու են Ռուսիոյ ազգային շահերուն համար, քան Հայաստան կամ Արցախ: Մինչդէռ Արեւմուտքն ալ Հայաստանին օգնութիւն չէ ցուցաբերած՝ զուտ սատարող յայտարարութիւններ ընելով եւ որեւէ գործողութեան չձեռնարկելով:

10. 2020-ի պատերազմէն ետք, երբ ատրպեյճանական բանակը մտաւ եւ բռնագրաւեց Հայաստանի արեւելեան տարածքը, Փաշինեան ոչ միայն ջանք չգործադրեց թշնամի Հայաստանի ինքնիշխան տարածքէն դուրս շարտելու համար, այլեւ Նոյնիսկ չի խօսիր հոն Ատրպեյճանի անօրինական ներկայութեան մասին:

11. Փաշինեանի սխալներուն երկար ցուցակը կը ներառէ իր ընդունումը, որ Հայաստանի ներսը խորհրդային ժամանակաշրջանի ատրպեյճանական բնակեցուած ներգաւառները (enclaves) կը հանդիսանան Ատրպեյճանի մաս: Պատճառ չկար, որ Փաշինեան Ատրպեյճանի առաջարկէր այդ ներգաւառները, մասնաւոր կը Ալիւ Նման պահանջք չէր ներկայացուցած:

12. Փաշինեան միակողմանի ճանչցած է Ատրպեյճանի տարածքային ամբողջականութիւնը՝ առանց Ալիւի կողմէ որեւէ փոխադարձ ճանաչման: Հաշուի առնելով վերոնշեալ 12 կարելուրագոյն հարցերու մէջ Փաշինեանի սխալ վերաբերումը, անոր մերժումը՝ հրաժարական տալու եւ իր աթոռը իրաւասու ղեկավարի մը յանձնելու, անոր միայն կը մնայ 2020-ի համաձայնագիրը անվաւեր ճանչնալ, քանի որ Ատրպեյճան խախտած է ատոր դրոյթներուն մեծ մասը:

Փաշինեան պէտք է հրաժարի Ալիւի հետ բանակցութիւններու սեղանին նստելէ, այնքան ատեն որ վերջինս ազատ չէ արձակած բոլոր հայ ռազմագերիները եւ իր զօրքերը դուրս չէ բերած Հայաստանի տարածքէն: Ալիւն Նախ պէտք է յարգէ իր նախկին պարտաւորութիւնները, նախքան որ հայերը վստահին իրեն՝ թէ պիտի կատարէ ապագայ համաձայնութիւնները:

Բարեբախտաբար, 2020-ի համաձայնագիրը դիւրութեամբ կարելի է չեղեալ համարել, քանի որ անկիւս չէ վաւերացուած Հայաստանի, Ատրպեյճանի եւ Ռուսիոյ խորհրդարաններու կողմէ իբրեւ միջազգային դաշնագիր: Չայն պարզապէս ստորագրած է Փաշինեան՝ առանց մէկու մը հետ խորհրդակցելու: Հայաստանի յաջորդ ղեկավարը պաշտօնավարման առաջին իսկ օրը պէտք է չեղեալ համարէ 2020-ի համաձայնագիրը:

### Արեւելահայերէնի թարգմանեց՝ Ռուզաննա Աւագեան Արեւմտահայերէնի վերածեց՝ Սեդա Գրիգորեան

## ԱրԿՍԻ ՊՈՒԿԱՆԵԱՆԻ...

Սկիզբ՝ Էջ 1

գութեան ծառայութիւնը՝ անելցնելով, որ արցախցի պաշտօնեաներուն մեղադրանք առաջադրուած է քրեական օրէնագիրքի 7 յօդուածներով, ներառեալ «կազմակերպուած խուճիկ կազմին մէջ ահաբեկչութեան»:

եան», «անօրինական զինուած խումբերու ստեղծման» եւ «ահաբեկչութեան ֆինանսավարման» յատկանիշներով:

Յայտնենք, որ Արցախի Հանրապետութեան նախագահ Սամուէլ Շահրամանեան Հաքարիի անցակէտը անցնելով հասած էր Հայաստանի Հանրապետութիւն:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Որբերեան ընտանիքը շնորհակալութիւն կը յայտնէ բոլոր անոնց, որոնք անձամբ, ծաղկեպսակով, նուիրատուութեամբ կամ հեռաձայնով մասնակից դարձան իրենց հարագատին՝



ՀԱՆԳՈՒՅԵԱԼ

ԱԼԻՍ ՈՐԲԵՐԵԱՆԻ

(Ծնեալ՝ ԱՅՎԱԶԵԱՆ)

մահուան սուգին:

Հանգուցեալի քառասունքի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 15 Յոկտեմբեր 2023-ին, յաւարտ Ս. եւ Աննա Պատարագի, Ս. Զառանից Մանկանց Մայր Եկեղեցոյ մէջ, Սալիպէ - Հայկէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան, ցաւակցութիւնները պիտի ընդունուին Եկեղեցոյ «Ն. Աղբալեան» սրահը:



Թուրքիոյ նուրջ

Վարուժան Գեղամեան. «ԷՐՏՈՂԱՆ ԻՐ ԵՆՈՅԹԻՆ ԿՐԿԻՆ ՀԵՉԵՅՈՒՑԱԾԷ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ ՈՒՂՈՒԿԾ ԴԱՅԱՆՑ-ՆԱԽԱՊԱՅՄԱՆ»

Թրքագետ Վարուժան Գեղամեան կը յայտնէ, որ Էրտողան Երկուշաբթի օրուան իր ելոյթին կրկին հնչեցուցած է Հայաստանին ուղղուած պահանջ-նախապայման:



«Կ'ակնկալենք, որ Հայաստանի կառավարութիւնը յառաջիկային կ'որոգեգրէ խաղաղութեան, ապահովութեան՝ բարօրութեան ձգտող քաղաքականութիւն: Կ'ուզեմ կրկնել, որ եթէ այդպէս ըլլայ, Հայաստան պահէ իր տուած խոստումները, մասնաւորապէս՝ «Չանգեզուրի միջանցքի» բացումը, պատրաստ ենք Հայաստանի հետ քայլ առ քայլ զարգացնել մեր յարաբերութիւնները: Իսկ Իրանի կառավարութեան կ'ուղղենք միանալ այս պատմական նախագիծին»:

Գեղամեան երեք եզրակացութիւն արձանագրած է այս խօսքէն.



1- Հայաստանի տե-ֆակտո իշխանութիւնը 2020-ին խոստացած է բանալ միջանցք: Ծիշոյ այս «խօսքը պահելու» մասին անդադար կը յիշեցնէ Էրտողան:

2- Թուրքիան ոչ մէկ պարագայի պիտի չբարելաւէ Հայաստանի հետ յարաբերութիւնները: Ան պիտի օգտագործէ այդ խայծ-նիւթը՝ Հայաստանէն «քայլ առ քայլ» նոր կարեւոր գիշումներ խլելու համար:

3- Իրան կը շարունակէ մնալ Սիւնիքով թուրանական միջանցքի դէմ միակ իրական գործօնը: Այս է պատճառը, որ վերջին շրջանին թուրքատրայէնական երկեակը կը փորձէ ամեն գնով մեղմացնել իրանական դիրքորոշումը:

Այս պատկերին լոյսին տակ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Հաքան Ֆիտան երեքշաբթի օր պիտի այցելէր բնագրաւուած Շուշի, իսկ Ատրայէնականի պաշտպանութեան նախարար Զ. Հասանով հրամայած է զօրացնել Հայաստանի հետ ռազմական պիծին ծառայութիւնը: Պահեստինա-խորայէլեան պատերազմին լոյսին տակ, մեր տարածաշրջանին մէջ կրնան զարգանալ ամենածայրայեղ իրադարձութիւնները»:

ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՄՇԱԿՈՅԹԻ ԱՄԻՍ



Գեղոյ Դեղիկեան

Չեմ յիշեր ո՞ր տարին էր, երբ քաղաքական եւ գանազան հարցերու կողքին, այդ օրերու Ֆրանսայի նախագահին գլխաւորութեամբ կազմակերպուած Ֆրանսախօս երկիրներու համագումարը, իբրեւ մեծ մտահոգութիւն եւ սհագանգ, օրակարգի գլխաւոր նիւթ դարձուցած էր երկրէն ներս ֆրանսերէն լեզուի նուազ գործածութեան հարցը: Լեզուին նահանջը:

Ապա, իբրեւ լուրջ եւ նոյնքան ալ մտահոգիչ եւ տագնապալի հարց, օրուան կառավարութիւնը պատկերասփիւռի եւ ձայնասփիւռի կայաններէն, նաեւ երկրի լայնածաւալ մամուլի էջերէն, այս մտահոգութիւնը իր ժողովուրդին եւ համայն աշխարհին զգալի, լսելի եւ տեսանելի դարձուցած էր:

Մտահոգութենէ աւելի մտատանջութիւն, որովհետեւ, ֆրանսացի լեզուագետներու եւ լեզուաբաններու ուսումնասիրութիւններուն համաձայն, ֆրանսերէնը սկսած էր ապրիլ իր կեանքի ամենէն տագնապալի օրերը: Մինչեւ 19-րդ դարու վերջերը, համայն աշխարհը հիացնող, գմայլեցնող այս լեզուն, նահանջի մէջ էր:

Այսպէս, օտար բառեր սկսած էին մուտք գործել մայրենի լեզուէն ներս ու այս ձեւով ըստ մասնագետներու, ֆրանսերէնը իր հմայքը ո՛չ միայն փոխած էր, այլեւ նոյնիսկ կորսնցուցած: Ու նոյն այդ համաժողովին ներկայացուած տուեալներուն համաձայն, ֆրանսերէնը աշխարհի խօսուած լեզուներուն շարքին մէջ կորսնցուցած էր իր պատուաւոր, առաջնակարգ դիրքը:

Ահա մեծ մտահոգութիւն մը Ֆրանսայի նման մեծ ու պատմական երկրին:

– Եթէ այս ընթացքը շարունակուի, ո՛չ ոք մեզ մտիկ պիտի ընէ, – այսպէ՛ս... այդ ժողովի տեղակալը արձանագրած էր եւ ակնցուցած, – որովհետեւ, ֆրանսերէնը սկսած էր խօսուիլ օտար բառերու միջամտութեամբ:

Տեղակալը նաեւ յստակօրէն մատնանշումներ կատարած էր այդ օրերու ֆրանսախօս երկիրներէն Սենեկալի, Ալճերիոյ, Գանատայի, Պելճիքայի եւ ուրիշներու օրինակներուն:

Այսօր, Ֆրանսա կը հաւատայ, որ իր լեզուն արդի գիտութեան եւ մանաւանդ շատ յառաջացած ու զարգացած ճարտարարուեստին հետեւանքով իր ենթահողը սկսած էր կորսնցնել եւ տեղի տալ դիմացը այլ լեզուներու՝ անգլերէնի եւ ուրիշներու:

Այս բոլորը կրկին ու կրկին անգամներ կարդալէ եւ լսելէ ետք, իբրեւ գիտակից անհատներ յանկարծ մեր մտքին մէջ հարցում մը կը ծագի.

– Հապա մե՞նք...


Մենք՝ հայրենի հողին վրայ կամ հո՛ն Սփիւռք կոչուած թափառական մեր կեանքին մէջ, մեր քանի՞ տոկոսը կը խօսի մեր լեզուն (արեւելահայերէն կամ արեւմտահայերէն) կամ քանի՞ տարի ետք տակաւին այս ընթացքով պիտի խօսուի կամ պիտի շարունակէ խօսուիլ, մանաւանդ մաքուր, սահուն եւ առանց օտար բառերու միջամտութեան, առանց աղաւաղումի: Այսինքն՝ առանց թըրքերէնի, անգլերէնի, ֆրանսերէնի, ռուսերէնի, արաբերէնի կամ սպաներէնի միջամտութեան:

Եւ ո՞վ պիտի կարենայ այս մեծ ու սարսափելի եւ մանաւանդ ժամանակակից մտահոգութիւնը ժողովրդականացնել, ահագանգել ու համազգային մտահոգութեան վերածել եւ անշուշտ առաջը առնել տալ: Ի՞նչ միջոցներով... որո՞ւ օգնութեամբ... է՞րբ...:

Ըսէ՞ք, ո՞վ...: Անձնապէս տեղեակ չեմ:

Այսօր, Ֆրանսան աւելի քան 66 միլիոն իր բնակչութեամբ, իր հսկայութեամբ եւ հզօրութեամբ, իր փառաւոր անցեալով, աշխարհի քաղաքակրթութեան վրայ իր յատուկ ներկայութեամբ, եւ ներկայ աշխարհի պատմութեան մէջ

վերցուցած իր մեծ դերով, մտահոգ է իր գաւակներուն խօսած լեզուով, իր գալիք նոր սերունդի խօսած մայրենիով, անոր մաքրութեամբ, սահուն արտայայտմամբ ու որակով:



Այսօ՛ր Ֆրանսան մտահոգ է... իսկ մե՞նք...:

Անգամ մը նայեցէ՛ք այս աշխարհի վրայ բացուած այն պատուհանէն, ուրկէ կարելի է տեսնել կամայ թէ ակամայ ստեղծուած հայ սփիւռքները: Մենք զմեզ չխաբենք:

Միւս կողմէ սակայն, չենք կրնար մոռնալ, ջուրը թափել, կամ ուրանալ աշխարհի տարածքին մեր միութիւններու, կազմակերպութիւններու, դպրոցներու եւ հոգեւոր կամ այլ հաստատութիւններու գերագոյն այն ճիգերը, որոնցմով կը փորձուի ներկայ մտահոգութիւնները թեթեւցնել: Չենք կրնար անտեսել անոնց՝ մեր նոր սերունդը փորկելու ճիգերը: Չիրենք մտքով եւ նոյնքան ալ հոգիով հա՛յ պահելու աշխատանքները: Բայց այնպէս կ'երեւի որ այս «բոլորը» բաւարար չեն: Տեսանելի է, մեր դէմ վագոլ հսկայ հոսանքն ու անոր ահռելի ուժգնութիւնը: Խօսքս բացառութիւններու մասին չէ:

Նաեւ պետք է լաւ գիտնալ, որ բացառութիւններով կարելի չէ ազգ մը պահել: Սակայն նաեւ յստակօրէն կը տեսնենք, որ մեր գաւակը իր կեանքի առաջին չորս-հինգ տարիներուն, երբ մեր անմիջական շրջապատին մէջ է, հպարտ ենք իրմով, իր սորված եւ արտայայտուած կամ խօսած հայերէնով, իր արտասանած «հայ եմ ես... քաջ Վարդանի թոռն եմ ես»-ով: Բայց, հետագային, երբ կամաց-կամաց տարիքի եւ պայմաններու բերումով, դպրոց, փողոց, տեսակաւոր օտար ընկերներ եւ շրջանակ, հեռատեսիլ, «Ելեկտրոնային խաղեր», «այ ֆօն» եւ «այ փատ» կը մտնեն իր կեանքէն ներս, արդէն իսկ իր մայրենի լեզուն ինքնաբերաբար ազդուած կ'ըլլայ, նախկին սահունութիւնը կորսնցուցած, ոտնակոխուած, գրեթէ անտեսուած:

Յիշենք... Ֆրանսա մտահոգ է եւ կը փորձէ պայքարիլ ու կասեցնել իր մայրենի լեզուին աղաւաղումը՝ իր նոր սերունդի բերնին մէջ: Իսկ մեր պատկերը տխուր է... որովհետեւ ցաւ ի սիրտ, մեզմէ շատ-շատեր տակաւին չեն կրցած ըմբռնել ստեղծուած աղետ-վտանգին մեծութիւնը:

Արդեօք ժամանակը հասած չէ՞ որ մեր կարգին մենք ալ հայախօսութիւնը ազգային արժանապատուութեան չափանիշ համարենք:

Դո՛ւք եւ ձեր խիղճը...

## Պրիմալե

### ԿՐ ԲԱՒԷ՞



Մարուշ Երամեան

Բոլոր պատերազմներուն մէջ ալ պատերազմող կողմերը դաշնակիցներ կ'ունենան, որոնք եթէ չօգնեն իսկ իրողապէս, գոնէ չեն խոչընդոտեր պատերազմական գործողութիւնները, այդպիսով բարձրացնելով պատերազմը շահելու հաւանականութեան տոկոսը:

Այլ ճշմարտութիւն մըն է ժողովրդային այն խօսքը որ կ'ըսէ՝ թշնամիս թշնամին բարեկամս է, որմէ կը հետեւեցնենք, թէ նոյն բռնատէրը ունեցող կամ ունեցած ազգերը եւ ժողովուրդները պէտք է իրարու դաշնակից ըլլան, կամ գոնէ իրարու օգնեն:

Սակայն իրողութիւնը յաճախ այդպէս չէ, ինչպէս օրինակ հայերուն, յոյներուն եւ արաբներուն պարագան, որոնք դարերու ընթացքին նոյն բռնատէրը ունեցեր են՝ թուրքը, օսմանցի թուրքը:



Ճիշդ այս նիւթը արծարծող յօդուած մը լոյս տեսած է եգիպտական «Ալ Մարի Ալեմ» (Եգիպտացի Այսօր) օրաթերթին 7 Հոկտեմբեր 2023-ի թիւին մէջ, Ուսամա Դարիպի գրիչով եւ խորագրուած «Կր Բաւէ Որ Իսլամ Են»:

Ոչ միայն հետաքրքրական յօդուած մըն է, այլ նաեւ քաջութեամբ գրուած, որովհետեւ յստակօրէն կ'ըսէ միտք բանին: Թարգմանաբար կու տանք այստեղ.

«Օսմանեան պետութիւնը «արդարօրէն» եւ նոյն չափով կը բաժնէր բրտութիւնն ու անարդարութիւնը իր սահմաններէն ներս: Կը նշմարենք Հայաստանի, Յունաստանի, Պուլկարիոյ, Ռումանիոյ, Սերպիոյ եւ Կիպրոսի նման երկիրներ, որոնք Օսմանեան կայսրութեան լուծին տակ ինկած են: Այս երկիրներուն պատմութիւնն ու ժողովրդային անարդարութիւնները լեցուն են բռնատիրութեան պատումներով: Ժողովուրդը այդ ժամանակաշրջանները կը յիշէ որպէս սեւ գուլումի տարիներ, երբ կեանքի դառնութիւնն ու ապրուստի դժուարութիւնը ճաշակած է ճմրուր:

Այս բոլորը կարելի է գտնել այդ ժողովուրդներուն գրականութեան եւ արուեստներուն, նաեւ՝ վարած քաղաքականութեան մէջ:

Ատոր ամենէն ցայտուն օրինակը դարերու թշնամանքն է հայերուն եւ թուրքերուն միջեւ, որովհետեւ համաշխարհային երկրորդ պատերազմի ընթացքին թուրքերը համայնական ջարդերու ենթարկած են հայերը:

Թուրքերուն հանդէպ նոյն կեցուածքը կը նկատենք մինչեւ այսօր յոյներուն եւ կիպրացիներուն կողմէ, անկախ այդ երկիրներուն պետական դրուածքէն:

Այսքանը հասկնալի է, որովհետեւ կան դառնութիւններ, որոնք սերունդէ սերունդ կը փոխանցուին. նոյնիսկ երբ դառնութեան սկզբնաղբիւրը անհետանայ, սերունդներուն մէջ կը գոյաւորուին որոշ զգացումներ, կեցուածքներ եւ համոզումներ:

Անհասկնալի եւ անբնականը կեցուածքն է Միջին Արեւելքի արաբներուն եւ իսլամներուն, որոնք նոյն բռնութիւնները ապրէր են Օսմանեան պետութեան տիրապետութեան ընթացքին շատ ատելի, քան եւրոպացիները, որոնք դաշնակիցներ ունէին Ռուսիոյ թէ արեւմտեան Եւրոպայի մէջ, որոնք կը ստիպէին, որ օսմանցիները նուազագոյնի իջեցնեն իրենց բռնութիւնները:

Իսլամներուն հանդէպ օսմանցիները չէին վարաներ գործադրելու. նոյն գործելակերպը՝ կողոպտել, մտրակ օգտագործել, նոյնիսկ ցիցահան ընել անոնք, որոնք իրենց չէին ենթարկուէր:

Հակառակ ասոր, մեր երկիրներուն մէջ տասնեակ միլիոններ կը հաշուեն անոնք, որոնք կողմակից են Օսմանեան իսլամիստական տիրապետութեան մը եւ կը ցանկան որ Էրտողան կարենայ վերակազմել Օսմանեան կայսրութիւնը, երազելով անոր հպատակները ըլլալ, մոռցած այն ահաւոր հինգ դարերը, որոնք ընթացքին համատարած էին աղքատութիւնն ու տգիտութիւնը: Եւ պատկերացնել, որ մինչեւ ֆրանսացիներուն մուտքը՝ 1798 թուականին, տակաւին մամուլ չկար այս երկրին մէջ:

Ոչ մէկ պատճառ կայ այս մագոխական կեցուածքին, բացի օսմանցիներուն իսլամ ըլլալէն: Մեր երկրին մէջ ժողովուրդը սիրով իր թեւերը կը բանայ վատ եւ անարդար տիրապետողին, եթէ իսլամ ըլլայ ան:

Այս է պատճառը, որ հայերը կը շարունակեն տարուէ տարի յիշել իրենց

ջարդը, մինչ արաբներէն ոչ ոք կը խօսի Սելիմ Ա. -ի Գահիրէի ժողովուրդին տուած ջարդին մասին, երբ քաղաքին նուաճումին առաջին օրն իսկ ջարդել տուած է քաղաքացիներէն տասը հազար մարդ, որպէսզի ահ տարածուի երկրին մէջ:

Կրօնականները մեծ դեր ունին անշուշտ տարածելու այս կեցուածքը, որ ներողամիտ է ներխուժողներուն հանդէպ, մոռացութեան կու տայ անոնց ոճիրները, նոյնիսկ կը խրատէ ժողովուրդը որ հպատակի այդ բռնատէրերուն, պարզապէս որովհետեւ իսլամ են անոնք:

Այսօր մեզմէ շատեր հրճուանքով կը խօսին Հայաստանի դէմ Ատրպէյճանի տարած յաղթանակին մասին. նոյն կեցուածքը ունին Քոսովոյի իսլամ ալպաններուն համար, մոռցած որ Քոսովոն ընդունած է Եւրոսահէմը որպէս Իսրայէլի մայրաքաղաք, իսկ Ատրպէյճանը վաղուց ի վեր կը գործակցի երաջանական պետութեան հետ:

Անցնող շաբաթը լեցուն էր ծանր միջադէպերով, որոնք ցնցեցին Միջին Արեւելքի երկիրները հաւանական ընդհանուր պատերազմի մը հեռանկարով, երբ այս շրջանը արդէն ատելի քան տասնամեակ մըն է, որ կը տառապի եւ կը հիւծի իր վրայ գործադրուած եւ կարծես պարտադրուած պատերազմներէն:

Վերջացնեմ հեքիաթանման պատումով մը: Ծեր իրեայ մեծահարուստ մը, հոգեվարքի անկողին վրայ կը կանչէ իր երեք մանչերը եւ անոնց կը բաժնէ իր ունեցուածքը: Մինչ այդ դուրսէն լաց ու կոծի ձայներ կը լսուին:

- Ի՞նչ կայ դուրսը, - կը հարցնէ ծեր իրեան:  
- Թուրքերը հայեր կը ջարդեն, - կ'ըսէ մեծ մանչը:  
- Հայերուն տեր եղէ՞ք, - կ'ըսէ ծերունի իրեան, - որովհետեւ հայերէն ետք կարգը մեզի պիտի գայ:

Չէ ըսած թէ ո՞վ պիտի ջարդէ զիրենք: Այդ չէ՛ հարցը, այլ ջարդուիլը ինք:

Բայց ի՞նչ կ'ըսեմ, եղածը հեքիաթանման պատում մըն է միայն:

## (MECC) ԵՎ (KIA)...

### Սկիզբ՝ էջ 12

շաբաթի հանդիսաւոր բացումը կատարուեցաւ:

Ներկաները ցուցափեղկին մէջ ցուցադրուած լուսանկարները դիտելով մօտէն ծանօթացան վերանորոգութեան աշխատանքի հանգրուաններուն:

Ապա, անոնք շրջազայելով վարժարանի գանազան բաժնիներէն ներս, իրենց ուրախութիւնը յայտնեցին, բարձր գնահատեցին հետեւողական կերպով ի գործ դրուած վերանորոգութեան աշխատանքը եւ բարեյաջող գործունեութիւն մաղթեցին վարժարանի ողջ անձնակազմին:

Մակար Սրբազան իր հայրական օրհնութիւնները փոխանցելով, մեծապէս գնահատեց, շնորհակալութիւն յայտնեց եւ իր երախտագիտութիւնը փոխանցեց պատուիրակութեան անդամներուն եւ իրենց ճամբով նաեւ (MECC) եւ (KIA) հաստատութիւններուն, իրենց կատարած յոյժ կարեւոր մարդասիրական օժանդակութիւններուն համար, մասնաւորաբար ան վեր առաւ մարդակերտումի դարբնացող հանդիսացող դպրոցներուն վերանորոգութեան ի նպաստ իրենց բերած յոյժ գնահատելի ներդրումը:


**«ԳԱՆՁԱՍԱՐ»**  
**ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՄ**

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլբօշեան-Պօղիկեան  
Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան  
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղեան  
Գրաշար՝ Անի Թովալեան-Սարուխան  
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարէն Պապեան-Աղայեկեան  
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան  
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլբօշեան  
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

# ԴՊՐԵՎԱՆՔԵԱՆ ՄԱՂԹԱՆՔ

(Ձօն՝ ա՛յն սրբազան յարկին՝ Դպրեվանքին, ուր հասակ առի թե՛ մտապետ, թե՛ հոգեպետ եւ թե՛ ֆիզիքապետ)



Առաքել Արդ. Գատեհճեան  
Երկուշաբթի, 11 Հոկտեմբեր 2023  
Անթիլիաս, Լիբանան



Աստուածային պարգեւ աննման,  
Ուր ամեն հայ կը զգայ ինչպէս իր տան:

Բաբախող սիրտն ես Կիլիկիոյ Ս. Աթոռին,  
Ուր կը պատրաստուին սերունդներ թանկագին:

Գորովազեղ մայր ես դուն,  
Մեր կողքին ես ցերեկ թե՛ իրիկուն:

Դուռն ես Երկինքի Արքայութեան,  
Յաճախողիդ ցոյց կու տաս ճամբան:

Եղար փարոսն ու լոյսը հայութեան,  
Միջոցն ու ճանապարհը հանգստութեան:

Չարթօնք պարգեւեցիր ժողովուրդիդ,  
Աստուծոյ մօտենալու յարմար առիթ:

Էմմանուէլը պատգամեցիր հայութեան,  
Որ է ուղին ու ճամբան փրկութեան:

Ընդունեցիր սերունդներ բազմաթիւ,  
Որոնք փրկեցին հայեր անթիւ:

Թուրն ու վահանն ես հայուն,  
Ամրոց ու ապաստան մնայուն:

Ժամանակաւորները կապեցիր Անժամանակին,  
Տալով անոնց Աստուծոյ հետ միացնող բանալին:

Իսկապէս յաւետ փառք քեզի,  
Չի առաջնորդեցիր մեզի:

Լուսաւոր օճախ Չարեհեան,  
Ոսկիի վսեմ ձուլարան:

Խապայեան Հայրիկը քեզ վերակենդանացուց,  
Հայ ազգին անզուգական ապաւեն դարձուց:

Ծառայելու առաքինութիւնը տուիր զաւակներուդ,  
Որք զայն հասցուցին բոլոր գաղութներուդ:

Կարեցիր ոսկեայ թելերով կերպասներ,  
Որք ծածկեցին հոգեր ու դժուարութիւններ:

Հայելիդ դարձուցիր ծառայութիւնը,  
Որուն միջոցաւ հայը ապրեցաւ ուրախութիւնը:

Ձիրքդ է՝ անտարակոյս, դպրեվանքի կերտել,  
Յղկուած, տաշուած զայն ժողովուրդին նուիրել:

Ղօղանջեցիր անվե՛րջ սպասարկութիւն,  
Տարածելով սեր ու միութիւն:

Ճարտարապետդ է Երկնաւոր Արքան,  
Իննիսուն ամեակներ քեզ դարձուց բնակարան:

Մեսրոպեան տառերով գրեցիր Տիրոջ մասին,  
Պարթեւեան ոգիով քարոզեցիր հայ ազգին:

Յիսուս Քրիստոսը ճանչցուցիր,  
Հաւատքն ու յոյսը ամրապնդեցիր:

Նորին Սրբութեան՝ հովանաւորութեամբ,  
Լեցուեցար ժողովուրդին ծառայելու փորձառութեամբ:

Շանթահարեցիր չար Սատանան,  
Պարգեւեցիր տիպա՛ր քահանան:

Ողջ հայութեան տունն ես դուն,  
Ո՛վ Դպրեվանք, իմ սիրուն:

Չարը քեզմէ կը վախնայ,  
Բարին քեզմով կը գոհանայ:

Պարծանք Սփիւռքի հայութեան,  
Գլխազիրը արտադրող ուսումնարան:

Ջուրդ անդադար կը հոսի,  
Աղբիւրդ քրիստոնէութեամբ կը յորդի:

Ռահվիրաներու շարքեր անվերջ,  
Վառող կրակ՝ շահ մը անշէջ:

Սփիւռքէն խաւարը հեռացուցիր,  
Տալով անոր արթո՛ւն շահակիր:

Վերելքի վսեմ համալսարան,  
Մարդ արտադրելու հիանալի ճեմարան:

Տիրադաւան մանկունք պատրաստեցիր,  
Աստուածապատկան զաւակներ նուիրեցիր:

Բամբերուն թռչիլ սորվեցուցիր,  
Երամներուն կազմակերպ դարձուցիր:

Յաւած հայութիւնը միացուցիր,  
Ազգին ու եկեղեցիին կապեցիր:

Ի՞նչ

Փայլուն աստղ ծնունդի,  
Երկինքին մէջ շողացող նազելի:

Քրիստոսագարդ կենցաղը ուսուցիր,  
Աստուածամարդը մեր մէջ ապրեցուցիր:

Օտարութեան մէջ եղար նոր Հայաստան,  
Պանդխտութեան մէջ նոր հանգստարան:

Ֆիզիքականը բոլորովին մոռցուցիր,  
Հոգեւորը չափազանց զօրացուցիր:

<sup>1</sup> Այստեղ կ'ակնարկուի Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ Վեհափայլ Հայրապետին:

<sup>2</sup> Աշխարհաբարի մէջ չկայ Ի տառով սկսող բառ մը:





## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



**ԽՈՅ**  
Չափազանց առատաձեռն ու բարի էք: Ձեր բարեսրտության պտուղը պիտի քաղեք վերջապես: Համբերատար եղէ՛ք:



**ՑՈՒԼ**  
Հեռաւոր երկրէն բարեկամ մը մեծ նուէր պիտի ստանաք: Պիտի քաջալերուիք եւ ձեր աշխատանքը նոր թափով կատարէք:



**Երկուորեակ**  
Ձեր հիւանդագին վիճակը պիտի բարելաւուի եւ պիտի կազդուրուիք: Մեծ յաջողութիւն մը ձեր դուռը պիտի թակէ:



**Խեցգետին**  
Սիրային գետնի վրայ յուսախաբութիւն մը պիտի ապրիք: Մի՛ յուսահատիք: Հարցերը պիտի լուծուին եւ ձեր հոգին պիտի խաղաղի:



**Առիւծ**  
Հաճելի ճամբորդութեան մը կը պատրաստուիք: Ձեր հարազատները օգնութեան ձեռք պիտի երկարեն ձեզի:



**Կոյս**  
Ձեր բժախնդիր աշխատանքն ու տիպար կեցուածքը գնահատանքի պիտի արժանանան: Ձեր ակընկալած պաշտօնի բարձրացումը պիտի իրականանայ:



**Կշիռք**  
Այս շաբաթ ձեր տնտեսական կարգ մը դժուարութիւնները պիտի կարենաք յաղթահարել ձեր աշխատանքը կրկնապատկելով: Ընծա-յուած առիթներէն օգտուեցէ՛ք:



**Կարիճ**  
Չափազանց յոռետես եղած էք: Ի՛ գուր մի՛ մտահոգուիք: Ծրագրեցէք ու պիտի տեսնէք, թէ ամէն հարց իր լուծումը ունի:



**Աղեղնաւոր**  
Բարեկամներու աջակցութիւնը ունենալով գործի նոր առիթներ պիտի գտնէք ու յաջողիք, եթէ ժրջան աշխատիք:




**Այծեղջիւր**  
Յաճախ աշխատանքի թերութիւնները կը մատնանշէք համարձակօրէն, ինչ որ պատճառ կը հանդիսանայ ձեր գործի յառաջընթացին: Միայն երբ ունի միայն կենսալը անտարբերութիւն է պարզապէս:



**Ջրհոս**  
Ընկերասեր էք ու համբերատար, սակայն թոյլ մի՛ տաք որ ուրիշներ միջամտեն ձեր գործերուն: Անկախ եղէ՛ք ձեր աշխատանքին մէջ:



**Ձուկ**  
Մի՛ արհամարիէք այն մարդիկը, որոնք օգնած են ձեզի ձեր դժուար օրերուն: Այժմ ձեր կարգն է անոնց օժանդակելու:



Սոնա Տէր Պողոսեան-Տարաքճեան

## ԻՆՉ ԿՐ ԹԵԼԱԴՐԷ 2024-Ի ՆՈՐԱՁԵՒՈՒԹԻՒՆԸ



Ոճաբաններ դիտել կու տան, որ ժամանակի հետ քայլ պահելու առաջին նախապայմաններէն մէկը նորաձեւութեան հետեւիլն է, պետք է նկատի առնենք նաեւ, թէ մեզի ի՞նչ կը յարմարի:

Ժամանակին եթէ փայլուն կտորներով, փուլերով, թելերով պատրաստուած, արծաթագոյն կամ ոսկեգոյն կտորներ կը յարմարէին տոնական հագուստներուն եւ գանոնք կը հագնէինք միայն տոնական օրերուն, ներկայիս ճիւղերու հետ ալ կրնաք համադրել գանոնք:

Փափուկ փետուրներ նախընտրելի է հագուստներու փէշերուն եւ թելերուն վրայ տեղադրել: Անցեալին կը թելադրուէր ոսկեգոյն կամ արծաթագոյն հագուստը առանձին-առանձին կրել, բայց ներկայիս կը խառնեն գանոնք նոյն հագուստին մէջ, այնպէս ինչպէս՝ սովորական գոյները:

Այս տարուան նորոյթ գոյնն է viva magenta-ն, այսինքն՝ կարմիրին երանգները: Այս գոյնը ուժ է եռանդ փոխանցող, ուժի նոր ազդանշան տուող, խիզախ եւ անվախ, թրթռացող գոյն է, որ կայտառութիւն, ուրախ եւ լաւատեսական տրամադրութիւն կը յառաջացնէ: Ան պորտոյի եւ մանիշակագոյնի խառնուրդ է, կարմիր երանգներով, շատ գրաւիչ եւ իւրայատուկ է:

2023-2024 աշուն-ձմեռ նորաձեւութեան հիմնական ընտրութիւններն են՝

- Կանանց կաշի հագուստներ. պարտադիր բաղադրիչն է այս եղանակին, իր մատիտանման կտրուածքով, որ շատ գրաւիչ եւ շքեղ ու արտասովոր կեցուածք մը կը ներկայացնէ:
- Երկար կանացի փէշերը, մանաւանդ կարմիր կիսաշրջագագեստները, որոնք առանձնայատուկ տեսք կ'ունենան իրենց շքեղ երկարութեամբ:
- Կարճ փէշերը. եթէ երկար փէշը ձեր սրտին

մօտիկ չէ, կրնաք ընտրել հակառակը՝ ուղիղ կտրուածքով կարճ կիսաշրջագագեստները: Այս մէկը կը կեդրոնանայ սլացիկ ոտքերու վրայ եւ ոճային գոյն ունի աշուն-ձմեռ եղանակին համար:

-Աշուն-ձմեռ կանացի նորաձեւութեան մաս կը կազմեն մետաղեայ հիւսուածքները՝ տպաւորիչ փայլով: Այսպիսի կերպասներով կիսաշրջագագեստը շատ հմայիչ եւ ազդեցիկ տեսք կու տայ կնոջ:

Երբ ցուրտ եղանակը մօտենայ ոճաբանները գանց չեն առնել իրենց շատ սիրելի ճիւղ կիսաշրջագագեստները՝ անոր հետ օգտագործելով տաք բուրդէ գազակներ, կամ համադրելով գայն կաշիին հետ:

Այս եղանակին, դասական մատիտի ձեւով կտրուածք ունեցող փէշերը չեն կորսնցուցած իրենց արդիականութիւնը: Այսպիսի փէշերը կը վայելեն սլացիկ կազմուածք ունեցող կանանց:

Այս տարուան պայուսակները փափուկ, փայլուն, ասեղնագործ կտորներով պատրաստուած կամ շատ փոքր կամ շատ մեծ են: Նախընտրելի է ամէն օր սովորական պայուսակներ կրել, սակայն եթէ ուզենք նորաձեւութեան հետեւիլ, այս երկու ծայրայեղ ոճի պայուսակներէն մէկը կրնանք կրել:

Իսկ կօշիկները կրկին շատ կոշտ, քառակուսի քիթերով կամ ընդհակառակը շատ երկար քիթերով են:

Երբ այս երկու ծայրահեղութիւններ նորաձեւութեան մէջ մուտք կը գործեն 1 կամ 2 տարի կը տեսնենք անոնց կեանքը:

Հետեւաբար ընտրեցէ՛ք ձեր սիրած ձեւերը, ձեր մարմինին համապատասխան եղողները, որպէսզի թէ նորաձեւութեան հետեւած ըլլաք եւ թէ հմայիչ տեսք ունենաք:

## Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

### ՏԵՂԱԿԱՆ

#### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՍԱՐՉԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

-Սուրիոյ ֆուտբոլի հաւաքականին միացան արժանաւարտ սուրիացի խաղացողներ Եգեթէ Ալամը եւ Իպրահիմ Յիսարը: Անոնք մաս պիտի կազմեն ուսումնամարզական հաւաքին, որ տեղի պիտի ունենայ Միացեալ Էմիրութիւններու մէջ: Աւելցնենք, որ հաւաքականի մարզիչ Յիքթորը ներկայացուցած է ուրջ անունները բաղկացած խաղացողներու ցանկ մը: Այդ անունները մաս կը կազմեն եւրոպական ակումբներուն:



-Սուրիոյ արթըթի հաւաքականի անդամ Մաճտ ատտին Ղազալ գրաւեց Զինաստանի Խանճո քաղաքին մէջ տեղի ունեցած Ասիոյ Ողոմպիական 19-րդ մարզախաղերուն վեցերորդ դիրքը:

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

#### ՍԱՐՈՋ, ՍՊԱՆԻԱ ԵՒ ՓՈՐՔՈՒԿԱԼ ՊԻՏԻ ԶԻՐԸՆԿԱԼԵՆ 2030-Ի ՄՈՆՏԻԱԼԸ

Անցեալ շաբթուան աւարտին, ՖԻՖԱ-ն 2030-ի ֆուտբոլի համաշխարհային խաղերու հիւրընկալութեան պատիւը տուաւ երեք երկիրներու՝ Մարոքի, Սպանիոյ եւ Փորթուգալի: Ան այս որոշումը յայտարարեց ճշդուած թուականէն մէկ տարի առաջ: Զամաշխարհային ֆուտբոլի մրցումներու 100-ամեակի զուգարդակութիւնը նկատի ունենալով, ՖԻՖԱ-ն որոշեց 3 մրցում ալ կատարել Ուրուկուէյի, Արժանթինի եւ Փարակուէյի մէջ: Սպանիոյ ֆուտբոլի հաւաքականի մարզիչ Լուիս Տի Լափոնթին փափաք յայտնեց, որ մրցաշարքի աւարտական հանդիպումը տեղի ունենայ Սպանիոյ մէջ: Աւելցնենք, որ Փորթուգալ, որ 2004-ին կազմակերպած էր Եւրոպայի ախոյեանութիւնը, երկու անգամ իր թեկնածութիւնը ներկայացուց՝ 2018-ին եւ 2022-ին, սակայն չյաջողեցաւ ձեռք բերել գայն:



Սպանիոյ Ռեալ Մատրիտ խումբի կիսապաշտպան խաղացող 20-ամեայ անգլիացի ճուտ Պելլիսիէմը Սպանիոյ առաջնութեան 9-րդ փուլի Օսասոնայի դէմ տեղի ունեցած խաղին յաջողեցաւ նշանակել երկու կոլ, որոնց շնորհիւ գերազանցեց փորթուգալցի Զրիստիանո Առնաւտոյի արդիւնաւետութեան մրցանիշը արքայական ակումբէն ներս: Պելլիսիէմը Ռեալին հետ մաս կազմած առաջին 10 հանդիպումներուն նշանակեց 10 կոլ եւ կատարեց 3 կոլային փոխանցում: Առնաւտոն Ռեալի առաջին 10 խաղերուն նշանակած էր 10 կոլ, կատարած՝ 1 կոլային փոխանցում:



Աւելցնենք, որ Պելլիսիէմ այս ամբողջ Պորիսիա Տորթմունտէն տեղափոխուեցաւ Ռեալ Մատրիտ՝ փոխան 103 միլիոն եւրոյի: Անոր պայմանագրութիւնը նախատեսուած է մինչեւ Յունիս 2029:

Երկուշաբթի  
16/10



16° 26°

Երեքշաբթի  
17/10



15° 28°

Չորեքշաբթի  
18/10



15° 28°

Հինգշաբթի  
19/10



16° 28°

Ուրբաթ  
20/10



15° 28°

Շաբաթ  
21/10



17° 26°

Կիրակի  
22/10



17° 28°

### ԽԱԶԲԱՌ (ՄԻ 459)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1			■									
2			■							■		
3					■			■				
4			■					■	■			
5		■			■					■		
6			■			■		■				
7		■		■		■		■		■		
8	■											
9					■		■		■		■	
10										■		
11		■					■					■
12								■				

#### Յորիզոնական

- 1- Տառի մը անունը: Ակնածանք:
- 2- Եւ: Եւրոպական երկիր: Կրկնուած ձայնաւորներ:
- 3- Ատեան: 4004: Ազգային հանդիսաւոր երգ, որ ընդունուած է իբրեւ նշան պետական կամ դասակարգային միութեան:
- 4- Կրկնուած բաղաձայններ: Ամուսինը մահացած կին: Տօթ:
- 5- Անձնական դերանուն: Կարթ: Զակառակ՝ աղբիւր:
- 6- Տառի մը անունը: Բայց: Երաժշտական գործիք:
- 7- Զակառակ՝ անձնական դերանուն:
- 8- Զակառակ՝ իրերայաջորդ տառեր: Զակառակ՝ Սիամանթիոյ ծննդավայրը: Երկբարբառ:
- 9- Փոքր:
- 10- Գոյնագոյն: Իրերայաջորդ տառեր:
- 11- 7001: Անատուններու մաքրուած մորթ:
- 12- Ուռնակ: Յետոյ: Գետի մէջէն ոտքով անցը:

#### Ուղղահայեաց

- 1- Կրկնեղ: Երբեմն:
- 2- Ճախարակ: Լեռ:
- 3- Դուռը փակելու գործողութիւն:
- 4- Զարկաւոր: 5400:
- 5- Զակառակ՝ լեզուով մը «այո»: Դատարկ: Ստեղծուած առաջին կինը:
- 6- Վայրի աղանի: Ջրային վայելչակազմ թռչուն:
- 7- Կոկորդ: Ձայնակիչ:
- 8- Զակառակ՝ երկբարբառ: Պատշաճ:
- 9- Ճամբայ: Փառաւոր: Իշխանական այթոռ:
- 10- Զակառակ՝ 4020: Իրերայաջորդ տառեր:
- 11- Մէկու մը նամակագրութեան ամբողջութիւնը: Յերեկ:
- 12- Տաղանդաւոր:

### ԽԱԶԲԱՌ (ՄԻ 458)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	տ	ա	զ	ն	ա	պ	ա	ն	տ	ա	2	
2	ա	ր	ա	լ	հ	ն	տ	է				
3	ժ			ր	ն	ա	խ	տ		ա	ն	
4	ա	ր	դ	ի	օ	ց		ք	ա	2		
5	ն	ն	տ		ի	ա	ա	ն				
6	ա	ն	զ	է	ն	ն	ի	ն	ջ			դ
7	կ	ա	յ	ա	ն	է	կ		ա	ս		
8	ի	կ	լ		է	ր	է	ր	ա	մ		
9	ր	ա	լ	է	ր	զ	ս	ի	ն	ա		
10	ն	ի	հ		ը	ի		ա	հ			
11	է	մ	ա	ն	ր	ր	ա	ի				
12	ս	ի	մ	ա	ր	տ	ւ	ն	ա	կ		

ԼՈՒՐԵՐ

